տաւորն ամբաստան եղեն զՄինաս վարդապետն և ետուն կոչել անդ զԹարգման վանից զՅովհաննէս վարդապետ, և ասեն . ագարակն Սինի՝ արտաքոյ պարսպի քաղաքին, ուր են վանքն Հայոց, պարտէզն ձիթենեաց, գերեզմանատունն, 'ի պարսպէ Ս. Փրկչի մինչեւ յարեւմտեան ճանապարհն՝ են 'ի կալուածոց Սալահիյէ դպրոցին, որք այժմ են 'ի ձեռս Հայոց . 'ի վերայ վանից և պարտիզին եդեալ էր տարեկան վարձս ինչ (Հէքիր), եւ իւրաքանչիւր ամի հատուցանէին վերակացուաց դպրոցին 880 փարայ : Իսկ այժմ փոխանորդն Հայոց 'ի 10 ամաց հետէ ոչ հատուցանէ զայն, եւ դումարն հասեալ է 8800 փարայ, զոր պահանջեմք այժմ 'ի Հայոց : Պատասխանի ետ Թարգմանն և ասէ, ոչ 'ի վերայ վանից և ոչ 'ի վերայ պարտիզին՝ եդեալ իցէ ոք զայդպիսի վարձս, և ոչ լուեալ է մեր թէ սահմանեալ իցէ ոք զայդպիսի տուրս, և ոչ ունիմք պարտս ինչ դըպրոցին այնմիկ, զի Հայք ժառանգեալ են զայնոսիկ տեղիս 'ի վաղ ժամանակաց մինչեւ ցայսօր, և մատոյց զգիրն դատաստանատան, ١٠٤١ (1631) . զի 'ի նմին ժամանակի մըճարեալ էր դատն ըստ զօրութեան հրովարտակացն Սէլիմայ և Սուլէյմանայ, հիմնեալ 'ի վերայ դաշնագրոց : Եւ մատոյց դարձեալ հրովարտակ ١١١١ (1699), յորում հաստատէր զսեփհականութիւնս Հայոց : Յետ այնորիկ յայտ արար դատաւորն այլազգեացն այնոցիկ . թէ տեղիքն այնոքիկ՝ սեփհական ժառանգութիւն է Հայոց, որպէս ցուցանեն վաւերական գրեանքն, և ոչ ոք սահմանեալ և կամ պահանջեալ է տուրս ինչ 'ի նոցանէ, և ոչ ձեզ այժմ օրէն է պահանջել զայն : Ապա արգել զնոսա օրինօք դատարանի, չհակառակիլ միւսանգամ ընդ Հայս և յանիրաւի պահանջել զիրս ինչ 'ի նոցանէ, ١١١٤ (1702) :

Ի սմին ժամանակի բազմացեալ էին գողք և աւազակք 'ի գիւղն Բեթղեհէմի, զի 'ի գիշերի մտեալ 'ի վանս կողոպտէին՝ զոր ինչ միանգամ գտանէին, և հարեալ վիրաւորէին նաեւ զընդդիմակացս իւրեանց : Պապա Մինաս բազում անգամ ծանուցեալ էր զայն Բդեշխի քաղաքին՝ այլ նա չէր ձեռնհաս խափանել զանկարգութիւնս նոցա . ապա էառ հրաման 'ի նմանէ, եւ կացոյց զինեալ պահապանս անդ 'ի վանս Բեթղեհէմի, և առանց խտրելոյ հարկանել